**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# ՈՐՈՇՈՒՄ

28 հունիսի 2021 թվականի թիվ 55

## ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՐԻԳՈՐ ԲԱԴԻՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐԻ ՃՇՏՄԱՆ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.07.2010 թվական թիվ 186-Ն հարամանով հաստատված հրահանգով՝ Հիմք ընդունելով Գուգարաց աշխարի ՍՊԸ-ի կողմից հաստատված հողամասի հատակագիծը և քանի որ հողամասի կոորդինատները սխալ են արտացոլված կադաստրային փարտեզում, հաշվի առնելով Գրիգոր Բադիրյանի դիմումը սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասի սահմանները տեղանքում արտացոլված կետերի համաձայն կադաստրային քարտեզներում և սեփականության, օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերում ամրագրելու մասին

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Գրիգոր Բադիրյանին սեփականության իրավունքով պատկանող 06-019-0101-0021 կադաստրային ծածկագրերով, Գուգարաց աշխարի ՍՊԸ-ի կողմից հաստատված հողամասի հատակագծով 1.01731 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների հողերի գործառնական նշանակության հողամասի հատակագիծը տեղանքում ճշտված VGS-84 կորդինատերով:

2. Դիմել կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանում տեղանքում արտացոլված կետերի համաձայն կադաստրային քարտեզներում և սեփականության, օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերում ուղղումներ կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության  Լոռու մարզի Արջուտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Արջուտ, 093 19 91 34 arjutigyuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՀՈՒԼԻՍԻ 2021թվականի N 56-Ա

### ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի՝

Որոշում   եմ՝

Արջուտ համայնքի 2021 թվականի բյուջեի բաժին 1, խումբ 1, դաս 1, 4111   հոդվածով նախատեսված միջոցներից 200000 /երկու հարյուր հազար/ դրամ երրորդ եռամսյակից տեղափոխել չորրորդ եռամսյակ,   իսկ   4112   հոդվածով նախատեսված միջոցներից՝ 200000 /երկու հարյուր հազար/ դրամ չորրորդ եռամսյակից տեղափոխել երրորդ եռամսյակ:

ՀԱՄԱՅՆՔԻ  ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ